600.0067.27.02.09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2009 թվականի №67Ա

ք.Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №272Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. Առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 3.056 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3.6672 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. Հզորության ամսական վճարը՝ 2808.87 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3370.644 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. Առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 18.503 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 22.2036 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 401.43 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 481.716 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 18.503 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 22.2036 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 17.931 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 21.5172 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 616.24 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 739.488 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 17.931 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 21.5172 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 0.458 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.5496 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. Հզորության ամսական վճարը՝ 194.21 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 233.052 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 0.97 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.164 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 542.11 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 650.532 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության «ՁորաՀԷԿ» հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 2.745 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3.294 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

7) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած

էլեկտրաէներգիայի ամբողջ քանակի համար)՝ 0.891 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.0692 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ -ի համար՝ 0.891 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.0692 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

8) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 55.7402 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 66.8883 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 0.1344 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0.1613 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը,

9) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 11.1208 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և13.3449 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման սակագինը՝ 0.027 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0.032 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 20-ի «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայության մատուցման սակագին սահմանելու մասին» №81Ա որոշումը,

2) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի նոյեմբերի 28-ի № 81Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 113Ա որոշման 1-ին կետը,

3) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 27-ի «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության «ՁորաՀԷԿ» հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին» № 221Ա որոշումը,

4) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 30-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների մասին» №606Ա որոշումը,

5) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 30-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների մասին» №293Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի ապրիլի 1- ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
27 փետրվարի 2009թ.